ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(առարկա)

ԹԵՄԱ՝ Համագործակցային մեթոդ

Կազմեց՝ Նորվարդ Գաբրիելյան

(անուն, ազգանուն, հայրանուն)

«Կապանի N 13 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Լիլիթ Առաքելյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

1. Ներածություն. 3

2. Համագործակցային ուսուցում. 4

3. Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոններ. 6

3. Ուսուցման կոլեկտիվ եղանակ. 9

4. Ռիվինի հակադարձ մեթոդիկայի կիրառումը հայոց պատմության դասավանդման ընթացքում. 10

Հավելված դասի օրվա պլան թեմա՝ Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորություն. . . 10

5. Եզրակացություն. 14

6. Օգտագործված գրականության ցանկ. 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոգեբանների և մանկավարժների հետազոտություններն ապացուցում են, որ ուսուցման գործընթացի մեջ հաջողության բացակայությունը պայմանավորված է ոչ թե աշակերտի բնածին սակավ ընդունակություններով, այլ ուսուցչի կողմից կիրառվող ոչ արդյունավետ աշխատաձևերով , որոնք ըստ էության հաղորդում են գիտելիք, բայց չեն սովորեցնում մտածել, սովորել, ստեղծագործել, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում մշակել գիտելիքի փոխանցման և կրթության այնպիսի ուղիներ, որոնք կնպաստեն գիտելիքի արդյունավետ յուրացմանը և սովորողի մտավոր ունակությունների զարգացմանը[1]:

Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխհամակցված գործունեության համակարգված եղանակն է՝ ուղղված կրթական նպատակների իրականացմանը:

Համագործակցողին ուսուցումը արդիական է, քանի որ մեր երկրի կարևոր հարստություններից մեկը գիտական ներուժն է, որի ձևավորման պատասխանատվությունը կրում է նաև հանրակրթությունը: Հասարակական բոլոր փոփոխությունները ազդում են նաև կրթական համակարգի վրա:

Ուսուցումը սովորողի ներսում տեղի ունեցող բարդ գործընթաց է: Ուսուցիչն այն կարող է միայն ուղղորդել, ստեղծել դրա համար նպաստավոր միջավայր, աջակցել և մտածելու հնարավորություն ընձեռել: Համագործակցային մեթոդներն ակնկալում են ուսուցչի դերի փոփոխություն, և այդ դերը լի է մարտահրավերներով: Համագործակցային ուսուցում կիրառող ուսուցիչը պետք է լինի համբերատար խմբի անդամներին ուղղորդելու համար:

Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը:[5]

Հասարակական կյանքն այժմ ավելի շարժուն է դարձել: Բնականաբար, արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Այս առումով մեծ նշանակություն են ստանում ակտիվ մասնակցության, մարդկանց փոխկախվածության, սեփական պատասխանատվության գիտակցման գործոնները:

Համագործակցային ուսուցումը ստեղծում է այնպիսի միջավայր, որում արժեվորում են վերոնշյալ գործոնները և զարգացվում են համապատասխան հմտություններն ու կարողությունները:

1. Մ. Մկրտչյան: ՈՒսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան 2011 թ. էջ 33:

5. Համացանց Վիկիպեդիա :

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Համագործակցային ուսուցումը այն միջոցն է, որի շնորհիվ հնարավոր է դաստիարակել հարգանք մարդկանց ընդունակությունների, կարողությունների, բնավորության առանձնահատկությունների և տարբերությունների նկատմամբ: Համագործակցողին ուսուցումը փորձում է լուծել նաև սովորողների հնարավորինս համաչափ զարգացման խնդիրը, խրախուսում է միմիանց օգնելու, աջակցելու որակները, ինչը շատ կարևոր է ժողովրդավարական հասարակությունում մեծ վտանգներ պարունակող բեվեռացումից խուսափելու առումով:

Համագործակցային ուսուցման տեսության մեջ ընդունված է, որ սոցիալական հմտությունները խմբային արդյունավետ աշխատանքի հիմքն են: Երկխոսությունը, հաղորդակցումը, աջակցությունը, օգնության հասնելը, օգնության տրամադրումը սոցիալական այն հմտություններն են, որոնք ապահովում են համակեցությունը և համագործակցությունը:[3]

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցությունն ստեղծում է ինքնաճանաչման ավելի բարձր մակարդակ, քան կարող են ապահովել մրցակցային կամ անհատական ուսուցման եղանակները: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու հետաքրքրությունների լայն շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, հետևաբար տալիս են ճշմարիտ հետադարձ կապ:[5]

Համագործակցային ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ոչ միայն աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ համագործակցությունը, այլև՝ ուսուցիչ-ուսուցիչ համագործակցությունը:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները շատ ավելի հեշտ են հարմարվում համագործակցային աշխատառճին, քան ուսուցիչները: Մինչդեռ համագործակցային ուսուցման գաղափարն անավարտ է առանց ուսուցիչների համագործակցային աշխատառճի:

3. Կ. Բաբայան: Համագործակցային ուսուցումը հասարակական փոփոխությունների համատեքստում: Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր N *1* 2016 թ.:
5. Համացանց Վիկիպեդիա:

Որակյալ ուսուցում ապահովելու համար դպրոցները պետք է .... Մրցակցային, անհատապաշտական կազմակերպական կառուցվածքից անցնեն համագործակցային, թիմային կառուցվածքին, որը կոչվում է /համագործակցային դպրոց/: Ուսուցման այդյունավետությունը շոշափելիորեն բարձրանում է, երբ ուսուցչական կազմը գործում է որպես թիմ:[3]

Տեխնոլոգիա բառը առաջացել է հին հունարեն տեխնո՝ արվեստ, վարպետություն, կարողության և լոգոս՝ խոսք, գիտություն բառերից:

Վ. Պ. Բեսպալկո., Մանկավարժական տեխնոլոգիան դիտագիտական համակարգի գործընթացային բաղկացուցիչն է:

Ա. Վ. Կլարին., Մանկավարժական տեխնոլոգիա նշանակում է բոլոր անհատական, մեթոդաբանական միջոցների համակարգային ամբողջություն և գործելու կարգ, ինչն անհրաժեշտ է մանկավարժական նպատակներիներին հասնելու համար:[4]

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

3.Կ. Բաբայան: Համագործակցային ուսուցումը հասարակական փոփոխությունների համատեքստում, Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր N 1 2016 թ.:

4. Համագործակցային գաղափարախոսության իրականացումը կրթական համակարգում: Գիտամանկավարժական ժողովածու, Երևան 2011 թ.:

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն. Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն. Խմբի անդամները համագործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:
3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն. Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:[5]
4. Սոցիալական հմտություններ. Խմբի անդամների միջև ձևավորվում են

վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

5. Խմբային գործընթաց. Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:[5]

6. Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր: Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը:

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:[5]

Համագործակցայն ուսուցման մեթոդներ

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. <u>Խճանկար</u>
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեք բանալի և մեկ կողպեք
5. Հինգ րոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների

համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար (Ջիգսո, Jigsaw): Խճանկարը համագործակցողին ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարի փուլերն են.[5]

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում
- ավարտական աշխատանք,
- ամփոփում

Շրջագայություն պատկերասրահում: Սա, խճանկարե մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք

5. Համացանց Վիկիպեդիա:

բնորոշ հատկանիշներ կան: Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:[5]

Հինգ րոպեանոց ազատ շարադրանք: Հինգ րոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և

առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք:

Համագործակցային ուսուցման արդյունավետության համար շատ կարևոր է ուսուցչի դասի պլանավորման նախապատրաստական աշխատանքների գրագետ կազմակերպումը: Այն ուսուցչից պահանջում է՝

- հիմնավորել տվյալ դասը համագործակցային խմբերով կազմակերպելու անհրաժեշտությունը,
- որոշել համապատասխան խմբեր կազմելու սկզբունքները, ձևերը
- նախապատրաստել անհրաժեշտ բաշխիչ նյութեր,
- ձևակերպել նպատակներին համապատասխան առաջադրանքներ,
- ձևակերպել առաջադրանքների կատարման հստակ հրահանգներ,
- որոշել հանձնարարությունների համապատասխան ծավալ:

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է : Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը:

Մանկավարժական տեխնոլոգիաներն ունեն դրսևորման երկու ձև. մի դեպքում դրանք բխում են տեսությունից, մյուս դեպքում՝ սկիզբ են առնում պրակտիկայից: Ուսուցման տեխնոլոգիաների հաջորդականություն է մշակել չեխ մանկավարժ-հումանիստ Յան Ամոս Կոմենսկին:[5]

- հստակ նախատեսված նպատակներ
- այդ նպատակներին հասնելու հստակ միջոցներ
- որոշակի կայուն կանոններ, թե ինչպես կիրառել այդ միջոցները դրված նպատակներին հասնելու համար

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ԵՂԱՆԱԿ

Գիտության հիմունքների յուրացումը, նրանց տիրապետումը սովորողներին

հնարավորություն է տալիս հասկանալու, տրամաբանորեն ըմբռնելու բնության և հասարակական շատ երևույթների առաջացման ու զարգացման պատճառները և այն հետևանքները, որոնք պետք է առաջանան նաև հետագայում: [1]

Ուսուցման գործընթացը վերարտադրության և յուրացման գործընթաց է, այլ ոչ թե պարզապես խոսելու, լսելու, կրկնելու: Վերարտադրվում և յուրացվում է պատմահասարակական փորձը, իսկ պատմահասարակական փորձը մարդկային գործունեության տեսակ է: Այսինքն ուսուցման բովանդակության միավորը գործունեության տեսակ է, և այս առումով կարելի է առանձնացնել շատ միանման մոտեցումներ:

Դյաչենկոյի մոտեցման մեջ հիմնականը ուսուցման նյութականության հարցն է՝ ուսուցումը մարդկանց միջև հաղորդակցություն է , և հենց սրա մեջ է նրա նյութականությունը:[1]

Հաջորդ կարևոր պահը կրթության ոլորտի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների առկայության և պատմահասարակական փուլերի մասին նկատառումն է: Զարգացումն ըստ էության անցումն է մի փուլից մյուսին: Հենց այդ փուլերն էլ նա անվանեց ուսուցման կազմակերպան պատմահասարակական եղանակներ, կամ կարճ՝ ուսուցման եղանակ:

Դասը ժամանակակից կրթության կազմակերպման առայժմ ամենատարածված ձևն է, որը տեղի է ունենում մի շարք ուսումնական եղանակներով:

1. Մ. Մկրտչյան։ Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան 2011թ. էջ 33։

ՐԻՎԻՆԻ ՀԱԿԱԴԱՐՁ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հաշվի առնելով վերոնշյալը և կարևորելով կրթական ոլորտում անցյալի տեսական և գործնական փորձը՝ անդրադարձ կատարենք Ռիվինի հակադարձ մեթոդիկային, որն արդեն բավական արդյունավետ կիրառվել է հայոց պատմության դասավանդման ընթացքում :

20-րդ դարի 10-ական թվականներին Ա. Ռիվինը ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման ընթացքում իրագործեց սովորողների զույգերով աշխատաձևի յուրօրինակ գաղափարը: Աշխատանքի կազմակերպման բազմաթիվ հնարքներից հատուկ ուշադրության է արժանի ըստ պարբերությունների տեքստերի ուսումնասիրման մեթոդիկան, որը կրճատ անվանում են Ռիվինի մեթոդիկա[12]:

Հայոց պատմության դասավանդման ժամանակ Ռիվինի հակադարձ մեթոդիկան կիրառելիս ուսուցիչը ներկայացնում է թեման, ապա յուրաքանչյուր սովորող ստանում է ուսուցչի կողմից իր թեման և դրան համապատասխան նախապես կազմված մանրամասն պլանը: Թեմայի պլանի կետերը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել համապատասխանությունը դասագրքի բովանդակությանը և յուրաքանչյուր կետում «բանալի բառերի» առկայությանը, որոնց օգնությամբ աշակերտը հեշտորեն կկազմի թեմայի բովանդակությունը:

Աշակերտի խնդիրն է պլանով վերականգնել թեմայի բովանդակությունը և ձևակերպել տեքստը: Իր պլանի առաջին կետի մշակման համար աշակերտը զուգընկեր է գտնում, որի հետ կարդում է այդ կետը, քննարկում, ներկայացնում է այն բովանդակությունը, որը կարող է դրան համապատասխանել, այնուհետև իր պլանի երկրորդ կետի մշակման համար աշակերտը նոր զուգընկեր է գտնում, պատմում է նրան թեմայի առաջիս հատվածի բովանդակությունը, հետո սրա հետ կարդում ու քննարկում է պլանի երկրորդ կետը, ապա զուգընկերները համատեղ ուժերով ձևակերպում են ստացված բովանդակությունը, որն առաջին աշակերտը գրանցում է իր տետրում:

Այսպիսով պլանի հերթական կետի մշակման համար աշակերտը նոր զուգընկեր է գտնում, վերապատմում է նրան պլանի նախորդ կետերի բովանդակությունը, քննարկում է նրա հետ պլանի հերթական կետը, ներկայացնում է այդ կետի հնարավոր բովանդակությունը, ընկերոջ հետ ձևակերպում է ստացված բովանդակությունը և այն գրում իր տետրում:

1. Մ. Մկրտչյան: ՈՒսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան 2011թ. էջ 88:

Այնուհետև նա նույն ձևով օգնում է իր ընկերոջը հասկանալ պլանի հերթական կետը, համակարգել ստացված բովանդակությունը և գրել այն տետրում:

Մշակելով պլանի բոլոր կետերը աշակերտը ստանում է իր թեմայի ամբողջական տեքստը, դրանից հետո նա կարող է ստանալ նոր թեմա և առաջարկված պլանով մշակել այն նույն ձևով:

Ռիվինի հակադարձ մեթոդիկայի օգտագործումը.

ա/ Այս մեթոդիկան կարելի է օգտագործել ծրագրով նախատեսված թեմաներով, փոխադրություններ, հոդվածներ, ռեֆերատներ գրելիս, ցանկալի է, որ ուսուցիչը նախապես կազմի մանրամասն պլանները:

բ/ Պարտադիր չէ, որ ամբողջ ուսումնական խումբը միաժամանակ հարցերը մշակի: Նպատակահարմար է առանձնացնել համահավաք խումբ:

գ/ Նշված մեթոդիկան կարելի է օգտագործել ռեֆերատներ գրելիս, ուսուցիչը գրում է ռեֆերատների պլանները, նշում սկզբնաղբյուրները և բաժանում ռեֆերետների թեմաները որոշակի աշակերտների[1]:

դ/ Մեթոդիկան կարելի է օգտագործել ծրագրային նյութի ուսումնասիրությունը կազմակերպելու ժամանակ, հատկապես այն դեպքերում, երբ ուսումնասիրվող նյութը ինչ որ պատճառով ոչ բավարար է շարադրված դասագրքերում:

ե / Մեթոդիկայի ավելի բարդ տարբերակը այն է, երբ աշակերտներին չի տրվում ապագա տեքստի պատրաստի պլանը: Այդ դեպքում աշակերտները զույգերով աշխատելիս առաջին փուլում կազմում են տրված թեմաներով տեքստերի պլանները:

զ/ Քննարկվող մեթոդիկայի օգտագործման մի տարբերակ ևս՝ երբ չկա ոչ միայն պատրաստի պլան, այլև թեման ձևակերպված չէ: Սկզբում առաջին փուլում անհրաժեշտ է ձևակերպել թեման, երկրորդում կազմել դրա պլանը և միայն երրորդ փուլում սկսել տեքստի քննարկումն ու ձևակերպումը[1]:

Հարց պատմություն առարկայից դասի օրինակ.

Օրինակ՝ դասի թեմա - «Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորություն»

Մեծ Հայքի Բագրատունյաց թագավորություն

I դաս

1. Ինչու՞ IX դարում արաբական խալիֆայությունը սկսեց թուլանալ:

2. Ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան Հայաստանում Արաբական խալիֆայության թուլացման և տրոհման ժամանակաշրջանում:

3. Ո՞վ է Աշոտ Բագրատունին և ի՞նչ գործունեություն է նա ծավալել:

4. Ո՞ր թվականին տեղի ունեցավ Շիրակավանի ժողովը և ի՞նչ հարց էր քննարկվում այնտեղ:

1. Մ. Մկրտչյան: Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը. Երևան 2011 թ. էջ 88:

5. Ո՞վ էր Վասիլ I կայսրը և ինչու՞ նա թագ խնդրեց Աշոտ Բագրատունուց:

6. Ինչպես Աշոտ Բագրատունին ճանաչվեց հայոց թագավոր:

7. Ներկայացրեք Սմբատ I գահակալումը Հայաստանում:

8. Ինչու Գագիկ Արծրունին դավաճանեց իր հայրենիքը և սկսեց համագործակցել արաբների հետ:

9. Ներկայացրեք Յուսուֆի արշավանքը Հայաստան և Սմբատ I վախճանը:

10. Ներկայացրեք Աշոտ Երկաթ արքայի գործունեությունը:

II դաս

1. Ինչու Աշոտ II փոխարինեց իր եղբայր Աբասը. ներկայացրեք վերջինիս գահակալումը:

2. Ներկայացրեք Աբասի Որդի Աշոտ III գահակալումը:

3. Ինչու Աշոտ III թագավորը ստացավ Ողորմած մականունը:

4. Երբ է գահակալել Սմբատ II և ներկայացրեք նրա գահակալումը:

5. Որ թվականին Անին հռչակվեց մայրաքաղաք և ինչու հենց այդ քաղաքը դարձավ մայրաքաղաք:

6. Որ արքաների օրոք հատկապես բարեկարգվեց և գեղեցկացավ մայրաքաղաք Անին:

7. Ներկայացրեք Գագիկ I գահակալումը:

8. Ինչպես լուծվեց Գագիկ I և Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթի միջև եղած տարաձայնությունները:

9. Ինչ շինարարական գործունեություն ծավալվեց Գագիկ I գահակալման տարիներին:

10. Կառավարման համակարգով ինչպիսի պետություն է բագրատունյաց թագավորությունը:

11. Ինչ է իրենից ներկայացնում իշխանաց իշխանի և հայոց սպարապետի պաշտոնները:

III դաս

1. Ինչ է իրենից ներկայացնում հողի մշակման եռադաշտային համակարգը:
2. Բագրատունյաց թագավորության շրջանում տնտեսության մեջ որ ճյուղերն էին գերակշռում:
3. Ինչպիսի կառուցվածք ունեին քաղաքները:

IV դաս

1. Ներկայացրեք ենթակա թագավորություններից Վասպուրականի թագավորությունը:
2. Որ թվականին հիմնվեց Սյունիքի թագավորությունը և ինչ գիտեք նրա մասին:
3. Ինչպես հիմնվեց Վանանդի կամ Կարսի թագավորությունը:
4. Ներկայացրեք Տաշիր-Զորագետի կամ Լոռու թագավորությունը:
5. Ինչպիսի իրավիճակ ստեղծվեց Երկրում Գագիկ I մահից հետո:
6. Ինչ քաղաքականություն էր վարում Բյուզանդիան Հայաստանի նկատմամբ Գագիկ I մահից հետո, և նրա ճնշման տակ ինչպիսի կտակ ստորագրեց Հովհաննես-Սմբատ թագավորը
7. Ինչ իրավիճակ էր ստեղծվել երկրում Հովհաննես-Սմբատի և Աշոտ IV մահից հետո:
8. Ներկայացրեք Գագիկ II արքայի գործունեությունը և վախճանը:

Սկզբում ներկայացնում եմ դասի թեման /25 րոպե/, այսինքն 1 դասը հարցերին

համապատասխան ներկայացնում դասը: Աշակերտներին հանձնարարում եմ պարտադիր տետրում թեմայի բովանդակությունը գրանցել, նաև լուսանցքում նշել այն աշակերտի անունը, ում հետ զույգով աշխատել են:

Մշակելով պլանի բոլոր կետերը՝ աշակերտը ստանում է իր թեմայի ամբողջական տեսքը, դրանից հետո իր ստացած բովանդակությունը նա կարող է ներկայացնել ուսուցչուհուն, որն էլ գրանցումներ է կատարում իր հաշվառման թերթիկում: /25 րոպե/: Հնարավոր է նաև ուսուցիչը ներխմբային քննարկում կատարի, որպեսզի տեսնի թե՞ արդյունքում տվյալ թեմայի վերաբերյալ աշակերտները ի՞նչ թերացումներ և ձեռքբերումներ ունեն:

Աշխատանքի ընթացքում կարող է ծագել օբյեկտիվ գնահատման խնդիր: Բարձր գնահատականի են արժանանում այն աշակերտները, ովքեր բացի տվյալ թեմայից տրված պլանով բովանդակությունն են պատմում ուսուցչին, այլ նաև հեշտությամբ քարտեզագրական աշխատանք են կատարում, վերլուծում թեմային վերաբերող որևէ երևույթի պատճառահետևանքային կապը, այսինքն պատասխանում են « ինչու՞» հարցին :

1 Մկրտչյան: Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան 2011թ. էջ 118

1 Նույն տեղում՝ էջ 1

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերջին տարիներին գիտելիքը դարձավ կրթության բովանդակության բաղադրիչներից մեկը և անհրաժեշտ այլ բաղադրիչների հետ ներմուծվեց նաև հաղորդակցման ունակություններ, հմտություններ, կարողությունների բաղադրիչը[15]:

Ուսումնասիրելով թեման ես կատարեցի հետևյալ եզրակացությունները.

1. Նոր բովանդակությունը պահանջում է այլ բնույթի ուսումնական պարապունքներ, համագործակցային ուսուցման տեխնոլոգիաների կիրառում որոնց ժամանակ կստեղծվեն մանկավարժական այնպիսի իրադրություններ որտեղ կձևավորվեն, կզարգանան հաղորդակցվելու, քննադատելու իրավիճակին

հարմարվելու, բացատրելու, ապացուցելու, սովորելու և այլ կարողություններ, նշանակում է ժամանակակից կրթության բովանդակությունը պահանջում է փոփոխություն նաև ուսուցման կազմակերպման գործընթացում, ինչն էլ ենթադրում է, որ կրթության բովանդակությունը և ուսուցման գործընթացի կազմակերպումը սերտ կապված են:

2. Կարծում եմ ապագա դպրոցի գերխնդիրը ձևավորել ինքնուրույն մտածողություն, աշխարհաճանաչողություն, սովորել մտածել և համագործակցել: Հետևաբար կիրառելով ուսուցման կոլեկտիվ եղանակի տարբեր մեթոդներ և հատկապես Ռիվինի հակադարձ մեթոդիկան հայոց պատմության դասավանդման ընթացքում կատարվում է վերոնշյալ խնդիրների համարժեք լուծում:[2]

3. Այսպիսի աշխատանքի կազմակերպմանը օգնում են դասարանում առկա լրացուցիչ գիտական գրականությունը, շտեմարանները, քարտեզները, համացանցը:

Ուսուցման գործընթացի կատարելագործման համար կարծում եմ անհաժեշտ են կրթության կազմակերպման նորագույն ձևերի կառուցում, համագործակցային մեթոդների տեխնոլոգիաների կիրառումը, որը կհանգեցնի կրթության ոլորտի վերաիմաստավորմանը, համագործակցային հարաբերությունների ձևավորմանը և անհատականացված կրթական համակարգի վերաձևավորմանը:

Աշխատանքի սկզբնական փուլում բնականաբար առաջանում են դժվարություններ, որոնք ազդում են տվյալ մեթոդի արդյունավետության, դասի որակի և աշակերտների կողմից նյութի յուրացվածության մակարդակի վրա, սակայն դրանք ժամանակի ընթացքում հաղթահարելի դժվարություններ են .

1. Այսպես օրինակ դժվարություններ են ծագում պլանի բաշխման, աշակերտների հարափոփոխ զույգերի կազմման և կազմած զույգերի փոփոխման ընթացքում, նրանց մեծամասնությունը դժվարությամբ են փոխում իրենց զույգերին:

2 Օ. Դուդումյան: Ռիվինի մեթոդիկան հաղորդակցման ունակությունների ձևավորման միջոց, Մանկավարժություն N 3 2012 թ:

Հետևաբար անհրաժեշտ է աշակերտների մեջ զարգացնել համագործակցային աշխատանքի մշակույթը :

2. Ռիվինի հակադարձ մեթոդիկայի կիրառման սկզբնական փուլում ուսուցչի կողմից պետք է լինի աշխատանքային աղմուկի ամպլիտուդայի վերահսկողություն, որովհետև դեռահասության շրջանում գտնվող աշակերտները կարող են լավ չտիրապետելով գործընթացի էությանը շահագործել ազատությունը և

աշխատանքային աղմուկը վերածել աղմուկի: Այսինքն մեթոդի կիրառման ընթացքում աշխատանքային աղմուկ անհրաժեշտ է վերահսկել, որպեսզի այն չգերազանցի աշխատանքային աղմուկի թույլատրելի աստիճանը, քանի որ աղմուկը խանգարում է և ուսուցչի աշխատանքային գործընթացին և մյուս աշակերտներին:

3. Հաջորդ դժվարությունը կարող է ծագել աշակերտների զույգերով աշխատանքում, հաճախակի կարող են շեղվել իրենց բուն աշխատանքային գործընթացից: Այդ իսկ պատճառով զույգերով աշխատանքի ընթացքում ուսուցիչը շարունակաբար պետք է ուշադրություն դարձնի շարքերում կատարվող աշխատանքին :

Հայոց պատմության դասավանդման ընթացքում Ռիվինի հակադարձ մեթոդիկան կիրառելիս՝ չափազանց կարևորում եմ, քանի որ, այս մեթոդով աշխատելիս ուսուցիչը կարողանում է լուծել իր առջև ծառացած հետևյալ խնդիրները.

1. Հայոց պատմության դասագրքերում կան թեմաներ, որոնք ոչ բավարար են շարադրված կամ ընդհակառակը բավականին բարդ են կազմված, պլանի հարցերը մշակելիս աշակերտը հեշտությամբ յուրացնում է բարդ թեման:
2. Ռեֆերատներ, հոդվածներ գրելիս, Ռիվինի հակադարձ մեթոդիկան օգնում է հեշտությամբ ստանալ տվյալ թեմայի բովանդակությունը:
3. Շարունակաբար կրկնելով աշակերտները հեշտությամբ յուրացնում են պատմական դժվար արտաբերվող տեղանունները, արքաների անունները, թվերը:
4. Համատեղ աշխատելով և փոխօգնության միջոցով աշակերտները քարտեզներից գտնում են տվյալ պատմական վայրերը, որտեղ տեղի է ունեցել ճակատամարտեր կամ գրավյալ տարածքները :
5. Ռիվինի հակադարձ մեթոդիկայով աշխատելիս աշակերտները քննարկելու ընթացքում փոխհաղորդակցության արդյունքում գտնում են պատմական իրադարձության պատճառահետևանքային կապը:

Այսպիսով Ռիվինի հակադարձ մեթոդիկան հայոց պատմության դասավանդման ընթացքում հնարավորություն է տալիս զարգացնելու սովորողների համագործակցությունը, փոխօգնությունը, զուգահեռ նաև անհատականացումը, որն էլ իմ կարծիքով ապահովվում է ուսուցման գործընթացի որակի կատարելագործումը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Բաբայան։ Համագործակցային ուսուցումը հասարակական փոփոխությունների համատեքստում, մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր թիվ 1 2016թ. ։
2. Մ. Մկրտչյան։ Ուսուցման եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան 2011թ էջ 33։
3. Օ. Դուդումյան։ Ռիվինի մեթոդիկան՝ հաղորդակցման ունակությունների ձևավորման միջոց, Մանկավարժություն թիվ 3 2012թ. ։
4. Համացանաց, Վիքիպեդիա